



Հասմիկ ՀԱԿՈՐՅԱՆ

«Միջազգային տնտեսական
հարաբերություններ» ամբիոնի
առաջին կուրսի մագիստրանտ,
տնտեսագիտական
ֆակուլտետ, ՀՊՏՀ



<https://orcid.org/0009-0003-9133-9498>

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2025.4-52

Հիմնաբառեր. ԳՀՓԿ, ներդրումներ, գիտական
ներուժ, տեխնոլոգիական մրցակ-
ցություն, մարդկային կապիտալ,
գիտելիքահենք տնտեսություն

21-րդ դարում պետությունների իրական հարս-
տությունը չափվում է ոչ թե հանքավայրերով, այլ
լաբորատորիաների «լույսով»: Տարածաշրջանային
զարգացող տնտեսություններն ունեն մեկ խնդիր.
գիտությունն ու նորարարությունը դարձնել ոչ թե
զաղափարական կարգախոս, այլ տնտեսական գո-
յարման պայման: Վերլուծության մեջ, համադրելով
միջազգային փորձը և միտումները, բացահայտվում
են ֆինանսավորման, կառավարման և բիզնես գի-
տության համագործակցության այն բացերը, որոնք
սահմանափակում են ԳՀՓԿ ներդրումները: Միա-
ժամանակ, առաջարկվում է նոր հայեցակետ՝ գի-
տությունը՝ որպես երկրի տնտեսական ինքնության
և անվտանգության առանցքային բաղադրիչ դի-
տարկելու առումով: ՀՀ ապագան, ինչպես ցույց
է տրվում հողվածում, կարող է որոշվել ոչ թե ռե-
սուրսներով, այլ գաղափարների արտադրողակա-
նությամբ:

Ժամանակակից համաշխարհային տնտե-
սության զարգացման հիմնական ուղղու-
թյունը ձևավորվել է գիտելիքահենք մոդելի շուրջ, որտեղ
ԳՀՓԿ ներդրումները նպաստում են ոչ միայն գիտական,
այլև տնտեսական ներուժի աճին՝ որպես արտադրողա-
կանության, մրցակցության առանցքային շարժիչ ուժ:
Առավել ևս, համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ
պետությունների մրցակցային առավելությունները կախ-
ված են ոչ միայն առկա բնական ռեսուրսներից, այլև
գիտելիքի ստեղծման, փոխանցման և կիրառման կարո-
ղությունից: Վերջին տարիներին ԳՀՓԿ ներդրումնե-
րի մակարդակը դարձել է զարգացման ինդիկատոր՝

արտացոլելով ոչ միայն երկրի տեխնոլոգիական առաջընթացը, այլև տնտեսական մտածողության խորքային որակը՝ հաստատելով, որ գիտահետազոտական քաղաքականությունը ոչ միայն գիտական, այլև սոցիալ-տնտեսական ռազմավարական գործիք է: Տնտեսությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ բարձր տեխնոլոգիական առաջատար երկրներն իրենց տնտեսությունները կառուցում են ըստ գիտահետազոտական ներդրումների արդյունքների՝ ապահովելով ոչ միայն նորարարական արդյունաբերության զարգացում, այլև գիտության և բիզնեսի միջև ամուր փոխկապվածություն: Հետազոտական ոչ այնքան արդյունավետ քաղաքականությունը, կարծում ենք, պայմանավորված է մասնավոր հատվածի՝ գիտական գործունեությանը շատ թույլ մասնակցությամբ, բիզնես - գիտություն կապի անբավարար զարգացմամբ, գիտնականների արտահոսքով:

ԳՀՓԿ ծախսերի մանաբաժինը եղել և մնում է ինչպես միկրոտնտեսական, այնպես էլ մակրոտնտեսական վերլուծությունների առանցքում: Դեռևս 20-րդ դարի հեղինակավոր տնտեսագետներ Շումպետերը, հետագայում նաև Սոլոուն առաջիններից էին, որ արտադրողականությունը և տնտեսական աճը պայմանավորեցին գիտության և նորարարության առկայությամբ: 20-րդ դարի վերջին Ռոմերը ևս իր գաղափարներով միացավ այս տնտեսագետներին^{1, 2, 3}: Վերջիններս, միմյանց լրացնելով, ստեղծեցին տնտեսական աճի ժամանակակից տեսությունը, որտեղ տեխնոլոգիական առաջընթացը և մարդկային կապիտալը հիմնական հենասյուներն են: Հետևաբար՝ տնտեսական քաղաքականության արդյունավետությունը կախ-

ված է նաև ԳՀՓԿ-ի և մարդկային կապիտալի համար կատարվող ծախսերից՝ մեծացնելով երկարաժամկետ տնտեսական աճի կարողությունը:

ՏՀԶԿ տվյալները ցույց են տալիս, որ ներկայումս ԳՀՓԿ ծախսերի համաշխարհային միջին ցուցանիշը մոտ 2.5% է՝ պարունակելով երկրների միջև զգալի անհամաչափություն. զարգացած երկրներում այս ոլորտի ծախսերը հասնում են 3-5%-ի, իսկ զարգացող երկրներում՝ 0.3-1%-ի⁴: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների՝ ԳՀՓԿ ներդրումների 80%-ից ավելին կենտրոնացված է մի քանի զարգացած երկրներում⁵: Այստեղից պարզ է դառնում, որ տեխնոլոգիական և գիտական ներուժի զարգացումը շատ ավելի արդյունավետ է այն տնտեսություններում, որոնք կարող են մեծ ծախսեր կատարել ԳՀՓԿ ուղղությամբ՝ ունենալով համապատասխան ինստիտուցիոնալ ենթակառուցվածքներ: Պատկերը լրացնենք Համաշխարհային բանկի հետազոտություններով, որտեղ նշվում է, որ ԳՀՓԿ ծախսերի և տնտեսական աճի միջև առկա է ինչպես կարճաժամկետ ոչ գծային, այնպես էլ երկարաժամկետ դրական կապ⁶: Այսինքն՝ բացի ծախսերի քանակից, նույնքան կարևոր են դրանց որակը և ներդրման արդյունավետությունը: Պարզ ասած՝ ազդեցությունը անմիջապես չի զգացվում, սակայն երկարաժամկետում ապահովվում է արագ և կայուն աճ: Առևտրի և զարգացման հարցերով ՄԱԿ-ի համաժողովի (UNCTAD) 2023 թվականի զեկույցում ևս նշվում են զարգացող երկրներում ԳՀՓԿ ներդրումների մարտահրավերները և հնարավորությունները, մասնավորապես՝ զարգացող երկրների հետ մնալն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կանաչ տեխնոլո-

¹ Schumpeter, J. A. (1911). The Theory of Economic Development: An Inquiry into Profits, Capital, Credit, Interest, and the Business Cycle. Harvard University Press, 1934 (translated edition), pp. 42-46, <https://cruel.org/books/hy/shortschumpeter/SchumpeterTheoryofEconDev.pdf>

² Solow, R. M. (1956). A Contribution to the Theory of Economic Growth. Quarterly Journal of Economics, 70(1), 65-94. <https://web.econ.ku.dk/pbs/Langt%20sig%20SOLOW.pdf>

³ Romer, P. M. (1990). Endogenous Technological Change. Journal of Political Economy, 98(5), S71-S102 (pp. S80-S85), https://web.stanford.edu/~klenow/Romer_1990.pdf

⁴ OECD Main Science and Technology Indicators, <https://www.oecd.org/content/dam/oecd/en/data/datasets/main-science-and-technology-indicators/msti-highlights-september-2023.pdf>

⁵ Domestic spending on research and development as a share of GDP, <https://www.unesco.org/reports/science/2021/en/dataviz/research-spending-share-gdp>

⁶ ՀԲ պաշտոնական կայքէջ, <https://documents1.worldbank.org/curated/en/145271530821525760/pdf/Measuring-the-returns-to-Research-and-Development.pdf>


գիաները և արհեստական բանականությունը⁷: Ներդրումները ԳՀՓԿ-ում կարող են նվազեցնել տեխնոլոգիական տարբերությունները, բարձրացնել տեխնիկական հմտությունների մակարդակը և ստեղծել զարգացած ենթակառուցվածքներ՝ հնարավորություն տալով երկրներին ոչ միայն ապահովել կայուն տնտեսական աճ, այլև ինտեգրվել համաշխարհային շուկաներին:

Հոդվածում տեղ գտած վերլուծության համար հիմք են հանդիսացել մասնագիտական գրականությունում առկա մի շարք մեթոդներ: Օգտագործելով, օրինակ, պատմական դինամիկ շարքերի դիտարկման մեթոդը հնարավոր է դարձել համեմատել տարածաշրջանային երկրների տարբեր ժամանակների իրավիճակը և փորձել տալ դրանց տնտեսական մեկնաբանումը՝ վերլուծության և համադրության միջոցով: Վերլուծության տվյալների հավաքագրման աղբյուր են հանդիսացել Համաշխարհային բանկի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՏՀԶԿ և ԵՄ պաշտոնական էջերը: Բացի քանակական տվյալներից, անդրադարձ է կատարվել նաև որակական գործոններին՝ պետական քաղաքականության առաջնահերթություններին, մասնավոր հատվածի ներգրավման աստիճանին և այլն: Աշխատանքի վիզուալացման համար օգտա-

գործվել են վիճակագրական, գրաֆիկական մեթոդներ:

Այսպիսով՝ ԳՀՓԿ ծախսերը ձևավորում են այն հիմքը, ըստ որի՝ կառուցվում է նորարարական տնտեսությունը: ՏՀԶԿ երկրների փորձը ցույց է տալիս, որ ԳՀՓԿ ներդրումների տեմպի փոփոխությունն արտացոլում է տնտեսությունների տեխնոլոգիական ակտիվության և կառուցվածքային արդիականացման մակարդակը:

Գծապատկեր 1-ի տվյալները վկայում են, որ վերջին մի քանի տարիների ընթացքում տատանումների պատճառ են դարձել համաշխարհային տնտեսական պարբերաշրջանները, քաղաքական առաջնահերթությունները և արտակարգ իրադարձությունների ազդեցությունները: 2008-2023 թթ. ընթացքում ԳՀՓԿ ծախսերն ընդհանուր առմամբ աճ են գրանցել, սակայն ոչ հավասարաչափ: Օրինակ՝ 2009 թ. հատկապես բիզնեսի կատարած ծախսերում կտրուկ անկում է դիտարկվել, ինչը պայմանավորված է եղել համաշխարհային ֆինանսական ճգնաժամով. մասնավոր ընկերությունները կրճատել էին հետազոտական բյուջեները: 2011-2019 թթ. նկատվել է այս ոլորտի ծախսերի վերականգնում. բիզնեսի կատարած ծախսերը հասել են միջինում 4-6%-ի: Սա կարելի




ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ԳՀՓԿ ծախսերի աճի տեմպի շարժընթացը ՏՀԶԿ երկրներում՝ ըստ ոլորտների, 2008–2023 թթ. (տոկոս)⁸

⁷ Technology and innovation report 2023 : opening green windows: technological opportunities for a low-carbon world, UNCTAD, 2023, <https://digitallibrary.un.org/record/4007851?ln=ru&v=pdf>

⁸ Աղյուսակը՝ հեղինակի կողմից, աղբյուրը՝ ՏՀԶԿ կայք, <https://www.oecd.org/en/data/datasets/main-science-and-technology-indicators.html>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2


ԳՀՓԿ ծախսերի ծավալն ըստ երկրների, 2007-2023 թթ. (մլն ԱՄՆ դոլար)⁹

կապել արդյունաբերության թվայնացման, տեխնոլոգիական մրցակցության աճի և նորարարացման քաղաքականությունների խթանման հետ: 2020 թ. կտրուկ անկումը, որ կապված էր COVID-19 համավարակի հետ, տեղի է ունեցել գրեթե բոլոր ոլորտներում՝ բացի կառավարության ծախսերից ($\approx 2.2\%$), քանի որ պետական հատվածն ակտիվորեն աջակցել է տեխնոլոգիական և առողջապահական հետազոտություններին: 2021-ին արձանագրված բարձր ցուցանիշը, հատկապես բիզնեսում՝ $+7.8\%$, կարելի է բացատրել հետհամաճարակային զարթոնքով, թվայնացման արագացմամբ և ներդրումային ծրագրերի վերականգնմամբ: Այսպիսով՝ բիզնես հատվածը ցուցաբերում է առավել փոփոխական, սակայն, ընդհանուր առմամբ, կայուն աճ՝ դառնալով ԳՀՓԿ ծախսերի հիմնական շարժիչ ուժը: Բարձրագույն կրթության ոլորտում աճի տեմպերը համեմատաբար դանդաղ են՝ տարեկան միջինում շուրջ 2% , ինչը պայմանավորված է պետական ֆինանսավորման մակարդակով և կրթական քաղաքականությամբ: Կառավարության կողմից իրականացվող ծախսերում նկատվում են ամենախոշոր տատանումները. օրինակ՝ 2016 թվականին գրանցվել է շուրջ -5.5% անկում, որը կարող է վկայել, օրինակ, հետազոտական

ֆինանսավորման կրճատման կամ ռեսուրսների վերառաջացման կամ այլ առաջնահերթությունների մասին: Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ ԳՀՓԿ ծախսերը զգալիորեն են ինչպես տնտեսական պարբերաշրջանների, այնպես էլ պետական քաղաքականության փոփոխությունների նկատմամբ: Ընդ որում, երկարաժամկետ դրական միտումը պայմանավորված է տեխնոլոգիական մրցակցության ուժեղացմամբ, նորարարական համակարգերի ինստիտուցիոնալ կայացմամբ և գիտակրթական կապերի ամրապնդմամբ, մինչդեռ կարճաժամկետ տատանումները կապված են համաշխարհային տնտեսական անորոշությունների և քաղաքական առաջնահերթությունների հետ:

Դիտարկելով գծապատկեր 2-ի տվյալները 2007-2023 թթ. ընթացքում՝ ակնհայտ է դառնում, որ աշխարհում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորային ծախսերը շարունակաբար աճել են, մասնավորապես՝ Չինաստանի պարագայում, որը վերջին տարիներին արագորեն խթանել է R&D ծախսերը՝ 136 մլրդ ԱՄՆ դոլարից հասցնելով գրեթե 781 մլրդ ԱՄՆ դոլարի: Ճապոնիայի ծախսերը սկսվում են բարձր մակարդակից՝ 176 մլրդ ԱՄՆ դոլար, սակայն 2009-ին նկատվում է նվազում, հետո՝ աստիճանաբար վերականգնում:

⁹ Աղյուսակը՝ հեղինակի կողմից, աղբյուրը՝ ՏՀԶԿ կայք, <https://www.oecd.org/en/data/datasets/main-science-and-technology-indicators.html>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ԳՀՓԿ ծախսերն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2023 թ. (տոկոս)¹⁰

ԱՄՆ-ում ծախսերը պահպանվել են շատ բարձր մակարդակում՝ 462 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով գրեթե 824 մլրդ ԱՄՆ դոլարի: ԵՄ-ում աճը եղել է միջին տեմպով՝ 337 մլրդ-ից մինչև մոտ 505 մլրդ ԱՄՆ դոլար: Հարավային Կորեայի դեպքում աճը կայուն է՝ 47 227 մլրդ-ից մինչև մոտ 135 մլրդ ԱՄՆ դոլար:


Ակնհայտ է, որ ասիական երկրները, հատկապես Չինաստանը և Հարավային Կորեան վերջին տասնամյակներում վարում են հստակ և նպատակային քաղաքականություն՝ ուղղված ԳՀՓԿ ծախսերի խթանմանը: Այս երկու տնտեսություններում R&D ծախսերն աճել են արագ տեմպերով՝ դառնալով նրանց արդյունաբերական և նորարարական աճի հիմնական շարժիչը:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին և Եվրոպական միությանը, ապա այստեղ պահպանվել է ծախսերի բարձր մակարդակը, և վերջիններս շարունակում են մնալ համաշխարհային առաջատարներ, սակայն նրանց ծախսերի աճի տեմպը համեմատաբար դանդաղ է, ինչը բնական է՝ հաշվի առնելով արդեն հասուն գիտատեխնոլոգիական հիմքը և տնտեսության կայուն կառուցվածքը:

Շարունակենք քննարկել ԳՀՓԿ ծախսերի ծավալն ըստ ֆինանսավորման աղբյուրների: Ինչպես տեսնում ենք, գծապատկեր 3-ում ամփոփված է ԳՀՓԿ ֆինանսավորումն ըստ աղբյուրների՝ պարզելու համար, թե որ հատվածն է ապահովում ծախսերի հիմնական մասը:

Ինչպես տեսնում ենք, բոլոր երկրներում էլ ցուցանիշների հարաբերությունը ցածր է, ինչը, կարծում ենք, պայմանավորված է հետխորհրդային այս երկրներում առկա կառուցվածքային և ինստիտուցիոնալ խնդիրներով: Նախ՝ տնտեսությունները մեծապես կախված են հումքային կամ ոչ բարձր արժեք ստեղծող ճյուղերից, հետո՝ ՀՆԱ մեծ մասը ձևավորվում է ծառայությունների, հանքարդյունաբերության հաշվին, որտեղ գիտահետազոտական ներդրումներն ունեն սահմանափակ կիրառություն: Բացի այդ, պետական քաղաքականության առաջնահերթությունները վերաբերել են այլ ճյուղերի, նույնիսկ այն դեպքում, երբ ռազմավարական ծրագրերում շեշտվում է նորարարության, գիտելիքահենք տնտեսության կարիքը: Սակայն, ամենայն հավանականությամբ, մյուս ամենակարևոր պատճառը մասնավոր հատվածի գրեթե աննշան

¹⁰ Աղյուսակը՝ հեղինակի կողմից, աղբյուրը՝ ԵՄ վիճակագրության կայք, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=R%26D_expenditure



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ԵԱՏՍ Երկրների ԳՀՓԿ ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, 2000-2023 թթ. (տոկոս)¹¹

մասնակցությունն է ԳՀՓԿ ներդրումներին, որը, թերևս, պայմանավորված է ռիսկայնությամբ և ներդրումային միջավայրի անկայունությամբ: Այս համատեքստում, ցավոք, ՀՀ ցուցանիշը զիջում է 0,18%-ով, ինչը փաստացի նշանակում է, որ գիտությունն ու տեխնոլոգիական զարգացումը տնտեսական աճի հիմնական գործոն չեն: Ընդհանուր առմամբ, համեմատելով եվրոպական երկրների հետ, կարող ենք ասել, որ ԵԱՏՍ երկրներում հետազոտական ծախսերը հետ են մնում զարգացած երկրների տնտեսությունների ցուցանիշներից:

Հետևաբար՝ ՀՀ-ում ԳՀՓԿ գործունեությունը դեռևս չի ընկալվում որպես տնտեսական աճի և մրցակցության հիմնական գործոն: Թեև վերջին մի քանի տարիներին արձանագրված դրական միտումներին, մեր երկրում ԳՀՓԿ ծախսերը կազմել են ՀՆԱ ընդամենը 0,18%-ը, որով զիջում ենք ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներին: Միջազգային փորձի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ տեխնոլոգիական բարձր զարգացած երկրներում, ինչպես, օրինակ, Ճապոնիայում, Հվ. Կորեայում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում, ԳՀՓԿ ներդրումները համարվում են ռազմավարական այն ուղղու-

թյունը, որն ապահովում է տնտեսական կառուցվածքի բազմազանացում և նորարարության բարձր մակարդակ: Այս տարբերությունը կարող ենք բացատրել նաև մշակութային և ինստիտուցիոնալ մտածողությամբ: Զարգացած երկրներում ինչպես պետության, այնպես էլ գործարար հատվածի համար ԳՀՓԿ ֆինանսավորումը դիտվում է որպես ապագայի ներդրում, իսկ զարգացող երկրներում՝ որպես ծախս, որի ազդեցությունն անմիջապես հնարավոր չէ չափել: Հենց այս պատճառով է, որ զարգացող երկրներում ֆինանսավորման աղբյուրները հենվում են հիմնականում պետության սահմանափակ ֆինանսավորման վրա: Բայց արձանագրենք, որ գլոբալացման պայմաններում ձևավորվում է նոր մրցակցային դաշտ, որտեղ այնպիսի փոքր տնտեսություններ, ինչպիսիք են Իսրայելը, Ֆինլանդիան, Էստոնիան, ցույց են տալիս, որ ռազմավարական պլանավորված և մարդկային կապիտալի ճիշտ ուղղորդմամբ կարելի է կառուցել գիտելիքահենք տնտեսություն, որի միջոցով կվերափոխվի գիտության դերը որպես տնտեսական անվտանգության և մրցունակության գործիք: Այսպիսով՝ կարելի է ապահովել նաև ինտեգրումը միջազգային գիտահետազոտա-

¹¹ Աղյուսակը՝ հեղինակի կողմից, աղբյուրը՝ ՀՔ կայք, <https://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS?locations=AM:BY:KZ:KG:RU>

կան համայնքի առաջատար ուղղություններին: Հետևաբար՝ ցանկալի է մշակել գիտահետազոտական գործունեության ազգային ռազմավարություն, որը կխթաներ պետություն — բիզնես հատվածի համագործակցությունը (օրինակ՝ 50-50 գիտահետազոտական ծրագրի ֆինանսավորում), կներգրավեր դրամաշնորհներ՝ դրանք ուղղելով ԳՀՓԿ ներդրումներին և ոլորտի զարգացմանը, տեխնիկայի, տեխ-

նոլոգիայի ձեռքբերմանը, կտրվեր որոշակի արտոնություններ այն մասնավոր ընկերություններին, որոնք ակտիվորեն ներդրումներ են կատարում նորարարություններում: Ծավալելով որոշակի գործունեություն այս ոլորտում՝ ամենակարևորը, կբարձրացվեր հասարակության գիտակցության մակարդակը գիտության դերի վերաբերյալ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Schumpeter, J. A. (1911). The Theory of Economic Development: An Inquiry into Profits, Capital, Credit, Interest, and the Business Cycle. Harvard University Press, 1934 (translated edition), pp. 42–46.
<https://cruel.org/books/hy/shortschumpeter/SchumpeterTheoryofEconDev.pdf>
2. Solow, R. M. (1956). A Contribution to the Theory of Economic Growth. Quarterly Journal of Economics, 70(1), 65–94.
<https://web.econ.ku.dk/pbs/Langt%20sig/SLOW.pdf>
3. Romer, P. M. (1990). Endogenous Technological Change. Journal of Political Economy, 98(5), S71–S102 (pp. S80–S85).
https://web.stanford.edu/~klenow/Romer_1990.pdf
4. OECD Main Science and Technology Indicators,
<https://www.oecd.org/content/dam/oecd/en/data/datasets/main-science-and-technology-indicators/msti-highlights-september-2023.pdf>
5. Domestic spending on research and development as a share of GDP,
<https://www.unesco.org/reports/science/2021/en/dataviz/research-spending-share-gdp>
6. ՀԲ պաշտոնական կայքէջ,
<https://documents1.worldbank.org/curated/en/145271530821525760/pdf/Measuring-the-returns-to-Research-and-Development.pdf>
7. Technology and innovation report 2023: opening green windows : technological opportunities for a low-carbon world, UNCTAD, 2023, հասանելի է. (25.10.2025)
<https://digitallibrary.un.org/record/4007851?ln=ru&v=pdf>
8. ՏՀԶԿ կայք,
<https://www.oecd.org/en/data/datasets/main-science-and-technology-indicators.html>
9. ԵՄ վիճակագրության կայք,
https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=R%26D_expenditure
10. ՀԲ կայք,
<https://data-worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS?locations=AM:BY:KZ:KG:RU>

Ասմիկ ԱԿՈԲՅԱՆ*Студентка первого курса магистратуры
кафедры "Международные экономические отношения",
экономический факультет, АГЭУ*

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

**МЕЖДУНАРОДНАЯ ПАЛИТРА ИНВЕСТИЦИЙ В НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ
И ОПЫТНО-КОНСТРУКТОРСКИЕ РАБОТЫ**

В XXI веке истинное богатство наций измеряется не месторождениями, а «светом лабораторий». Для развивающихся региональных экономик ключевая задача – превратить науку и инновации из идеологического лозунга в условие экономического выживания. Сравнивая международный опыт и формирующиеся тенденции, выявляются пробелы в финансировании, управлении и сотрудничестве между бизнесом и наукой, которые ограничивают инвестиции в исследования и разработки (НИОКР). Предлагается новый взгляд на науку как на ключевой компонент национальной экономической идентичности и безопасности. Как показывает анализ, будущее Армении может определяться не столько её природными ресурсами, сколько продуктивностью её идей.

Ключевые слова: *НИОКР, инвестиции, научный потенциал, технологическая конкуренция, человеческий капитал, экономика, основанная на знаниях*

Hasmik HAKOBYAN*First-year Master's student at the Chair
of "International Economic Relations", Faculty of Economics, ASUE*

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

INTERNATIONAL INVESTMENTS PORTFOLIO IN RESEARCH AND DEVELOPMENT

In the 21st century, the true wealth of nations is measured not by mines, but by the “light of laboratories”. For developing regional economies, the key challenge lies in transforming science and innovation from an ideological slogan into a condition for economic survival. By comparing international experience and emerging trends, the study identifies gaps in financing, governance, and business-science collaboration that limit investments in research and development (R&D). The paper goes beyond numbers, offering a new perspective on science as a core component of national economic identity and security. As the analysis suggests, Armenia's future may be defined not by its natural resources, but by the productivity of its ideas.

Keywords: *R&D, investments, scientific potential, technological competition, human capital, knowledge-based economy*